

ՀՀ ԿԳՆ Երևանի «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիր
2016թ. օգոստոսի 22

Կլոր սեղան «Ժայռ» Սևանի ճամբարում

**Ֆիզիկական կրթության, կամային որակների, ինքնուրույն քաղաքացիական կյանքի
պատրաստության հեղինակային հանրակրթական համակարգ**

Հանրակրթության պետական չափորոշիչից (ՀՀ կառավարության 2010թ. 439-Ն որոշման հավելված 1)

- 1. Միջին դպրոցի շրջանավարտը պետք է «իմանա քաղաքացիական պաշտպանության և անվտանգ կենսագործունեության կանոնները և սովորեցնի դրանք ուրիշներին»:**
- 2. Ավագ դպրոցի ծրագրի «Ֆիզիկական կրթություն և անվտանգ կենսագործունեություն» ուսումնական բնագավառը նպատակաուղղված է՝**
 - սեփական առողջության պահպանման և ֆիզիկական ներդաշնակ զարգացման նկատմամբ պատասխանատվություն, ֆիզիկական կուլտուրայով և սպորտով զբաղվելու մշտական պահանջ ունեցող, բավարար ֆիզիկական պատրաստվածություն, բարոյականային հատկանիշներ, փոխօգնության հասնելու պատրաստակամություն, համարձակություն, ընկերասիրություն, հանդուրժողականություն ունեցող,
 - ազգային բանակում ծառայելու և հայոց բանակի պատմական ավանդույթները շարունակելու սեփական պարտքը գիտակցող, կարգապահ, ֆիզիկապես առողջ և բազմակողմանի զարգացած,
 - հայրենիքի պաշտպանությանը նախապատրաստված, արտակարգ իրավիճակներում արագ կողմնորոշվող և աշխատանքային գործունեության պատրաստ քաղաքացու ձևավորմանը:

Հանրակրթության պետական չափորոշիչի «Հանրակրթական ծրագրեր առարկայացանկի ձևվորման հիմնական սկզբունքները» բաժնում որոշված «Նախնական զինվորական պատրաստություն» առարկան «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի ուսումնական պլանում ներկայացված է «Առաջին բուժօգնություն», «Քաղաքացիական պաշտպանություն և արտակարգ իրավիճակներ», «Նախագորակոչիկի իրավունքներ և պարտականություններ», «Զինվորական կարգապահություն և զինվորի որոշ հմտություններ» դասընթացներով: «Նախագորակոչիկի իրավունքներ և պարտականություններ» դասընթացն ընդգրկված է 11-րդ դասարանի «Հասարակագիտության» ծրագրում: Մյուս դասընթացները կազմակերպվում են գործնական եղանակով, ռազմա-մարզական հավաքների, խաղերի, ճամբարների ընթացքում:

Սովորողների պարապմունքները ռազմամարզական ճամբարում ուղղված են առաջին բուժօգնության, քաղաքացիական պաշտպանության, արտակարգ իրավիճակներում կողմնորոշվելու և գործելու, շարային պատրաստության, զենքի հետ վարվելու կարողությունների ձևավորմանը: Սովորողի ֆիզիկական կարողությունների զարգացմանն ուղղված պարապմունքները ճամբարում առօրյա են: Դրան են ուղղված նաև ճամբարում և ուսումնական տարվա ընթացքում ուսումնական օրացույցով իրականացվող քայլարշավները, ճամփորդությունները, բարձունքների հաղթահարումը:

Արշավախմբային-ռազմամարզական- բնապահպանական-հայրենագիտական ճամբար

Սևան, «Ժայռ»

2016թ. սեպտեմբեր-հոկտեմբերի փուլերը

- Սեպտեմբերի 1-4
- Սեպտեմբերի 8-12
- Սեպտեմբերի 15-18
- Սեպտեմբերի 18-21
- Սեպտեմբերի 21-24
- Սեպտեմբերի 29-հոկտեմբերի 2
- Հոկտեմբերի 6-9
- Հոկտեմբերի 13-16
- Հոկտեմբերի 20-23
- Հոկտեմբերի 23-26
- Հոկտեմբերի 26-29

Մասնակիցները՝ 5-12-րդ դասարանի տղաներ և աղջիկներ, ուսուցիչ-հրահանգիչներ:

Գործունեության ուղղությունները՝

- Մարզական՝ ընդհանուր ֆիզպատրաստություն, լող, վազք, հրաձգություն-նետաձգություն-սուսերամարտ, ըմբշամարտ-ինքնապաշտպանության հնարներ
- Հայրենագիտական՝ տեղանքի ուսումնասիրում, բարձունքի նվաճում, հուշաձաններ, բնակավայրեր
- Բնապահպանական՝ Սևանի խնդիրները. ափամամերձ տարածքի մաքրում
- Արդի հայկական բանակը՝ գործող զորամասի օրինակով. այցելություն զորամաս
- Ազգային պարեր, երաժշտություն
- Առաջին բուժօգնություն, անվտանգ կենսագործունեություն
- Ինքնավարություն-ինքնասպասարկում
- Ճամբարային քննարկումներ

Հոկտեմբերի 10-14 - ռազմամարզական բաց խաղեր կրթահամալիրում:

Երևանի «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիր

Երևան, Բաֆֆու 57, (+374) 10 747246, 91 4310994, info@mskh.am

- Կրթահամալիրի կայքը՝ mskh.am
- Ռազմամարզական ուսումնական կենտրոնի բլոգը՝ razmamarzakan.wordpress.com
- Հնգամարտի բլոգը՝ hngamart.wordpress.com
- Եռամարտի բլոգը՝ bikemskh.wordpress.com
- Խաղային մարզական ակումբների բլոգը՝ marzakanblog.wordpress.com